Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 4-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«04» մայիսի 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը կանոնակարգում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ կամ Համալսարան) հաշվապահության գործունեությունը:
2. ԳՊՀ հաշվապահությունը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է Համալսարանի հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու հետ կապված աշխատանքները, համակարգում ԳՊՀ հաշվապահական հաշվառմանը վերաբերող բոլոր հարաբերությունները:
3. ԳՊՀ հաշվապահությունը գործում է ՀՀ օրենսդրության, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման սկզբունքների, ստանդարտների կիրառման ուղեցույցերի և պարտադիր կիրառման այլ փաստաթղթերի, հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական այլ ակտերի, ԳՊՀ կանոնադրության, ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումների, սույն աշխատակարգի, Համալսարանի այլ կանոնակարգերի հիման վրա:
4. ԳՊՀ հաշվապահությունը կազմված է Համալսարանի գլխավոր հաշվապահից, ավագ հաշվապահից, հաշվապահներից, գանձապահից և ԳՊՀ հաստիքացուցակով սահմանված այլ աշխատակիցներից:
5. ԳՊՀ հաշվապահությունն իր գործունեության ընթացքում հաշվետու և ենթակա է Համալսարանի ռեկտորին:
6. ԳՊՀ հաշվապահության անմիջական ղեկավարումն իրականացնում է Համալսարանի գլխավոր հաշվապահը:

II. Համալսարանի հաշվապահության հիմնական գործառույթները

7. ԳՊՀ հաշվապահության հիմնական գործառույթներն են.

1) ՀՀ օրենսդրության համաձայն՝ ԳՊՀ ֆինանսական գործառույթների իրականացում,
2) հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու հետ կապված աշխատանքների կատարում,

3) ԳՊՀ ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում,
4) ԳՊՀ բյուջեի կատարման հաշվետվության կազմում,
5) ԳՊՀ նոր ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմում,
6) ԳՊՀ բյուջեի կատարում,
7) ԳՊՀ ակտիվների և պարտավորությունների գույքագրում,
8) ԳՊՀ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանում,
9) այլ գործառույթների իրականացում:

8. ԳՊՀ հաշվապահությունը սույն աշխատակարգով սահմանված կարգով ապահովում է Համալսարանի ուսանողների վարձավճարների մուտքագրումը:
9. ԳՊՀ հաշվապահությունը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է.
   1) ԳՊՀ այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտների մուտքագրումը,
   2) հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկը և վճարումը,
   3) աշխատավարձի հաշվարկը և փոխանցումը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին,
   4) ԳՊՀ բյուջեով նախատեսված այլ ծախսերը:
10. ԳՊՀ հաշվապահությունն իր գործառույթներն իրականացնելիս սահմանված կարգով համագործակցում է ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև հարկային, բանկային, ապահովագրական, ներդրումային, բարեգործական, ձեռնարկատիրական այլ կազմակերպությունների, արտահամալսարանական կառույցների հետ՝ ըստ անհրաժեշտության:

III. Համալսարանի վճարովի ուսուցման համակարգում սովորողների ուսման վարձավճարների գծով եկամտի և Համալսարանի կողմից կիրառված ուսման վարձի զեղչի ծախսի հաշվառման կարգը

Համալսարանի վճարովի ուսուցման համակարգում սովորողների ուսման վարձավճարների գծով եկամտի և Համալսարանի կողմից կիրառված ուսման վարձի զեղչի ծախսի ճանաչումը՝ հաշվեգրումը կատարվում է ըստ կիսամյակների, հաշվառվելով համապատասխանաբար ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի ապրիլի 17-ի N-353-Ն հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի (այսուհետ՝ հաշվային պլան) թիվ 611.4 և 712.7 հաշիվներում, հետևյալ սկզբունքներով.

1) առկա ուսուցման ոչ ավարտական կուրսերի վարձավճարների գծով եկամուտը և վարձավճարների զեղչի գծով ծախսը ճանաչվում են տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտին հաջորդող ամսվա ընթացքում՝ համապատասխանաբար հունվար և հունիս ամիսներին,
2) առկա ուսուցման ավարտական կուրսերի վարձավճարների գծով եկամուտը և վարձավճարների զեղչի գծով ծախսը ճանաչվում են տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքների և (կամ) պրակտիկայի ավարտին հաջորդող ամսվա ընթացքում՝ համապատասխանաբար հունվար և մայիս ամիսներին,

3) հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերի վարձավճարների գծով եկամուտը և վարձավճարների զեղչի գծով ծախսը ճանաչվում են տվյալ կիսամյակի քննաշրջանի սկզբին հաջորդող ամսվա ընթացքում՝ համապատասխանաբար մարտ և հոկտեմբեր ամիսներին,

4) հեռակա ուսուցման ավարտական կուրսերի վարձավճարների գծով եկամուտը և վարձավճարների զեղչի գծով ծախսը ճանաչվում են տվյալ կիսամյակի քննաշրջանի ամսվա ընթացքում՝ համապատասխանաբար փետրվար և ապրիլ ամիսներին։

11. Եթե ուսանողը, համապատասխան կիսամյակը ավարտելով, Համալսարանի մի ուսուցման համակարգից անցում է կատարում մյուս ուսուցման համակարգ մինչև սույն աշխատակարգի 11-րդ կետում նշված ամիսները, ապա տեղափոխման մասին հրամանի ամսվա վեջին աշխատանքային օրը ճանաչվում են ավարտված կիսամյակի համար սահմանված վարձավճարների գծով եկամուտը և վարձավճարների զեղչի գծով ծախսը։
12. Սույն աշխատակարգի 11-րդ կետի ենթակետերում նշված ամիսները ֆինանսական տեսանկյունից համարվում են կիսամյակների վերջ, հետևաբար կրթական ծառայության մատուցման գործարքը տվյալ կիսամյակի համար համարվում է ավարտված ամբողջովին։
13. Մինչև կիսամյակի ավարտը ուսանողի կամ երրորդ անձանց կողմից տվյալ ուսանողի համար վճարված ուսման վարձը ճանաչվում է որպես կանխավճար՝ հաշվառվելով հաշվային պլանի թիվ 523.1 հաշվում, որը մարվում է հասույթը հաշվեգրելիս, եթե ուսանողը չունի որևէ պարտավորություն (ունենալու դեպքում նախ մարվում է այդ պարտավորությունն ամբողջովին)։
14. Եթե ուսման վարձը մինչև հասույթի հաշվեգրումը չի վճարվել, հաշվեգրված հասույթը ճանաչվում է որպես դեբիտորական պարտք, հաշվառվելով հաշվային պլանի թիվ 221.2 հաշվում։
15. Հնարավոր ռիսկերը կառավարելու նպատակով մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը նախորդ ուսումնական տարվա ուսման վարձերի դեբիտորական պարտքերը թիվ 221.2 հաշվից տեղափոխվում և հաշվառվում են թիվ 222.7 հաշվում՝ առկա ուսուցման համակարգում օգոստոս ամսվա ընթացքում, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում։
16. Մինչ կիսամյակի ավարտը Համալսարանից ազատված (հեռացված), բացառությամբ 18-րդ կետում նշված դեպքի, ուսանողի կամ երրորդ անձանց կողմից տվյալ ուսանողի ուսման համար վճարված գումարը՝ առավելագույնը տվյալ կիսամյակի վարձավճարի չափով, ճանաչվում է որպես հասույթ հեռացման մասին հրամանի ամսվա վերջին աշխատանքային օրը։
17. Մինչ ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակի սկիզբը ուսման վարձը վճարած, սակայն դասերին չմասնակցած և Համալսարանից ազատման մասին դիմում ներկայացրած անձանցից պահված վարձի 10%-ը ճանաչվում է որպես հասույթ հեռացման մասին հրամանի ամսվա վերջին աշխատանքային օրը։

18. Համալսարանից հեռացված (ազատված) ուսանողների ֆինանսական պարտքերը, որոնք հաշվառվում են թիվ 222.7 հաշվում, մեկ տարվա ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չվճարվելու դեպքում ճանաչվում են որպես ժամկետանց և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշման համապատասխան դուրս են գրվում հաշվեկշռի թիվ 222.7 հաշվից ծախսերի հաշվին, թիվ 714.2 հաշով թիվ 223.1 հաշվում ձևավորվող դեբիտորական պարտքերի դուրս գրման պահուստաֆոնդի միջոցներով և հաշվառվում են արտահաշվեկշռում, մինչև 100.000 դրամ պարտավորության դեպքում թիվ 941.1 հաշվում, իսկ 100.000 դրամից ավել պարտավորության դեպքում՝ 941.2 հաշվում:
19. Համալսարանից հեռացված (ազատված) և ֆինանսական պարտքեր ունեցող անձանց անձնական գործերը հետ չեն վերադարձվում մինչև ֆինանսական պարտավորությունների ամբողջական մարումը, վճարված գումարը ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշման համապատասխան վճարման օրը արտահաշվեկշռային համապատասխան հաշիվներից դուրս է գրվում և վերականգնվում է հաշվեկշռում՝ ճանաչվելով որպես եկամուտ, ձևակերպվելով դեբետ 222.7, կրեդիտ 223.1, միաժամանակ նույն գումարով դեբետ 223.1, կրեդիտ 616.1:
20. Համալսարանից հեռացված (ազատված) և ֆինանսական պարտքեր ունեցող անձինք հեռացմանը համապատասխանող կիսամյակում վերականգնվելիս՝ վճարում են նախկին պարտքը ամբողջովին, որը ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշման համապատասխան վճարման օրը վճարված գումարի չափով արտահաշվեկշռային համապատասխան հաշիվներից դուրս է գրվում, և վերականգնվում է հաշվեշռկում՝ ճանաչվելով որպես եկամուտ, ձևակերպվելով դեբետ 222.7, կրեդիտ 223.1, միաժամանակ նույն գումարով դեբետ 223.1, կրեդիտ 616.1:
21. Համալսարանի մի ֆակուլտետից (բաժնից) մյուսը տեղափոխվելու, այլ բուհերից Համալսարան տեղափոխվելու, երկրորդ մասնագիտություն ստանալու, շարունակական կրթության կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ավարտելուց հետո Համալսարանում ուսումը շարունակելու մասին դիմում ներկայացրած անձանց կողմից առարկայական տարբերությունների հանձնման և այլ ակադեմիական առաջադրանքների կատարման գործընթացը կազմակերպելու համար վճարված գումարը հասույթ է ճանաչվում ժամանակավոր կցագրման մասին հրամանի հիման վրա:
22. Նախորդ ուսումնական տարվա (տարիների) ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած, ինչպես նաև ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած անձինք վերականգնվելու դեպքում վճարում են վերականգնման հրամանին համապատասխան հաշվարկված վարձավճարը, որը հասույթ է ճանաչվում:
23. Համալսարանից հեռացված կամ տարկետում ստացած ուսանողի՝ տվյալ ուսումնական տարվա համար մինչ այդ տրված ուսման վարձի զեղչը անվավեր է

ճանաչվում, իսկ հետագայում ուսանողի վերականգնման դեպքում ուսման վարձի զեղչը կարող է տրվել՝ ըստ սահմանված կարգի:

24. Եթե որևէ պատճառով հասույթի կամ զեղչի հաշվեգրումը սխալ է կատարվել, ապա սխալի ուղղումը կատարվում է սխալը հայտնաբերելու ամսվա ընթացքում՝ այն ձևակերպելով որպես ծախս թիվ 729 հաշվում, կամ որպես եկամուտ թիվ 629 հաշվում՝ ձևակերպման մեջ նկարագրելով սխալի բնույթը:
25. Սույն աշխատակարգի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերն ուժի մեջ են մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ 2016 թվականի հունվարի 1-ից:
26. Ուսանողի, ուսանողի ծնողի կամ վերջինիս որևէ ներկայացուցչի կողմից որպես ուսման վարձ վճարված, ինչպես նաև սոցիալական փաթեթի շրջանակում կատարված ավել վճարումները ենթակա են հետվերադարձի ուսանողին կամ ծնողին՝ վերջիններիս կողմից ներկայացված դիմումի հիման վրա, կանխիկ կամ բանկային փոխանցման եղանակով:
27. Համալսարանի մի ֆակուլտետից (բաժնից) մյուսը տեղափոխվելու դեպքում նախկին ֆակուլտետի (բաժնի) համար սահմանված զեղչը նոր ֆակուլտետի (բաժնի) համար ճանաչվում է անվավեր: Նոր ուսման վարձի զեղչը կարող է տրվել ընդհանուր հիմունքներով:

IV. Համալսարանում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորողների ուսման վարձավճարների գծով եկամտի և պետության կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների հաշվառման կարգը

28. Պետության կողմից ՀՀ կրթության կառավարման պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) միջոցով Համալսարանի բանկային հաշվին ամսական փոխանցվող գումարը, որը ներառում է պետական պատվերով (այսուհետ՝ անվճար) սովորող ուսանողների, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները, ճանաչվում են որպես կրեդիտորական պարտք և հաշվառվում են հաշվային պլանի թիվ 523.4 հաշվում:
29. Յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամսում (մասնակի փոխհատուցման դեպքում նաև մինչև կիսամյակը) ՀՀԿ ԳՆ-ի կողմից փոխանցված գումարից վճարվում է ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գումարները, ըստ համապատասխան ցուցակների՝ սույն աշխատակարգի III բաժնով սահմանված կարգով:
30. Եթե կիսամյակի առաջին ամսվա ընթացքում Լիազոր մարմնի կողմից գումարը չի բավարարում 30-րդ կետում նշված գումարները վճարելու համար, ապա այդ գումարները վճարվում են այն ամսվա ընթացքում, երբ Լիազոր մարմնի կողմից փոխանցված գումարների մնացորդը կբավարարի նշված վճարներն ամբողջովին մարելու համար:
31. 30-րդ կետում նշված գումարները մարելուց հետո տվյալ և հաջորդող ամիսների ընթացքում Լիազոր մարմնի փոխանցված գումարները ճանաչվում են որպես

անվճար սովորող ուսանողների հասույթ և հաշվառվում են հաշվային պլանի թիվ 611.1 հաշվում՝ դեբետագրվելով 523.4 հաշվից:

32. Լիազոր մարմնի կողմից պետության միջոցներից Համալսարանի բանկային հաշվին ամսական փոխանցվող կրթաթոշակների գումարը ճանաչվում է որպես կրեդիտորական պարտք և հաշվառվում է հաշվային պլանի թիվ 523.4 հաշվում:
33. Եթե կրթաթոշակի համար փոխանցված գումարը 100%-ով բավարարում է տվյալ ամսվա կրթաթոշակի վճարման համար պահանջվող գումարին, ապա Համալսարանը պետության կողմից կրթաթոշակ ստացող բոլոր ուսանողների բանկային հաշիվներին է փոխանցում տվյալ ամսվա կրթաթոշակը ամբողջովին՝ դեբետագրելով հաշվային պլանի թիվ 523.4 հաշվից:
34. Համալսարանը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ռեկտորի հրամանով հաստատում է այն ուսանողների ցանկը, որոնց պետության կողմից տրամադրվելու է կրթաթոշակ:
35. Պետության կողմից կրթաթոշակ տրամադրվում է անվճար համակարգում ընդունված բոլոր առաջին կուրսեցիներին, մյուս կուրսերի անվճար համակարգում սովորող ուսանողների 90%-ին, որը ձևավորվում է նախորդ ուսումնական տարվա ընթացքում առավել բարձ առաջադիմություն /ՄՈԳ/ ունեցող ուսանողներից, և առկա ուսուցման համակարգում սովորող ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողներին:
36. Ոչ ավարտական կուրսերի ուսանողներին կրթաթոշակ տրվում է տվյալ տարվա սեպտեմբերից մինչև հաջորդ տարվա սեպտեմբերը ընկած ժամանակահատվածի համար, իսկ ավարտական կուրսի ուսանողներին՝ տվյալ տարվա սեպտեմբերից մինչև հաջորդ տարվա հունիսը ընկած ժամանակահատվածի համար,:
37. Անվճար համակարգի ոչ ավարտական կուրսերի ուսանողների կրթաթոշակը կազմում է ամսական.
    1) բակալավրիատում՝ 5000 դրամ կամ 6050 դրամ, եթե ուսանողը նախորդ ուսումնական տարվա ընթացքում ստացել է միայն գերազանց գնահատականներ,
    2) մագիստրատուրայում՝ 5500 դրամ:
38. Անվճար համակարգում սովորող ավարտական կուրսերի ուսանողների կրթաթոշակը կազմում է ամսական.
    1) Բակալավրիատում ՝ 5200 դրամ կամ 6300 դրամ, եթե ուսանողը նախորդ ուսումնական տարվա ընթացքում ստացել է միայն գերազանց գնահատականներ,
    2) մագիստրատուրայում՝ 5500 կամ 6300 դրամ, եթե ուսանողը նախորդ ուսումնական տարվա ընթացքում ստացել է միայն գերազանց գնահատականներ:
39. Համալսարանից ուսանողի հեռացման (ազատման) կամ տարկետման տրամադրման դեպքերում, դադարեցվում է տվյալ ուսանողի կրթաթոշակի

վճարումը: Տարկետումից վերադարձող ուսանողի կրթաթոշակի վճարումը վերսկսվում է վերականգնման մասին հրամանի ամսվանից: